Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 6-ի N 961 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 4-ի N 1119-Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով (այսուհետ՝ համապատասխան մաքսային ընթացակարգ) ապրանքի (ապրանքների) մեկ տարվանից ավելի ժամկետով բացթողման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով բաց թողնված ապրանքների մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը հետևյալ հիմքերով՝

1) պետության կարիքների, գիտահետազոտական, կրթական, մշակութային, մարդկանց և կենդանիների առողջության պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության.

2) ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում արտահանված, այդ թվում՝ ֆինանսական վարձակալությամբ տրված ԱՏԳԱԱ 84-89-ը ապրանքային ծածկագրերի շարքը դասվող ապրանքների:

3. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով բաց թողնված ապրանքների մաքսային ընթացակարգի՝ յուրաքանչյուր երկարաձգվող ժամկետը չի

կարող գերազանցել 3 տարին, իսկ ֆինանսական վարձակալությամբ տրված ԱՏԳԱԱ 84-89-ը ապրանքային ծածկագրերի շարքը դասվող ապրանքների համար՝ ֆինանսական վարձակալության մասին պայմանագրի գործողության ժամկետը:

4. Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ անձ) կարող է դիմել «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի ժամկետը մեկ տարվանից ավելի ժամկետով երկարաձգելու թույլտվություն ստանալու համար, եթե ապրանքն արդեն իսկ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի շրջանակներում գտնվում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից դուրս՝ ունենալով «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի համար մինչև մեկ տարի ժամկետով թույլտվություն:

5. Սույն կարգի 4-րդ կետին համապատասխան՝ թույլտվություն ստանալու համար դիմումը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացվում տվյալ ապրանքի՝ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի թույլտվության ժամկետը լրանալուց առնվազն 2 ամիս առաջ: Դիմումում պետք է նշվեն անձի անվանումը կամ անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները, ինչպես նաև համապատասխան մաքսային ընթացակարգով բաց թողնված ապրանքների մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգման հիմքը՝ համաձայն սույն կարգի 2-րդ կետի:

6. Դիմումին կից պետք է ներկայացվեն՝

1) տեղեկատվություն արտահանված ապրանքի մասին՝ համաձայն N 1 ձևի.

2) մաքսային հայտարարագրի պատճենը, որով թույլատրվել է ապրանքի բացթողումը՝ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով.

3) համապատասխան պայմանագրի պատճենը (առկայության դեպքում), իսկ ֆինանսական վարձակալության տրված ԱՏԳԱԱ 84-89-ը ապրանքային ծածկագրերի շարքը դասվող ապրանքների համար՝ ֆինանսական վարձակալության մասին պայմանագրի պատճենը.

4) հիմնավորում մեկ տարվանից ավելի ժամկետով երկարաձգման անհրաժեշտության վերաբերյալ (ներկայացվում է միայն սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում).

5) ծրագրի նկարագիրը՝ համաձայն NN 2 և 5 ձևերի (ներկայացվում է միայն սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում).

6) այլ տեղեկություններ (դիմողի հայեցողությամբ):

7. Անձն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած ոչ հավաստի տեղեկությունների համար:

8. Դիմումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ, ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, տվյալ ծրագիրն ընդգրկող տնտեսության ոլորտը համակարգող լիազոր պետական մարմին՝ կարծիքի, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն՝ կարծիքների ամփոփման և նախագծի մշակման համար:

9. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և տվյալ ծրագիրն ընդգրկող տնտեսության ոլորտը համակարգող լիազոր պետական մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված դիմումը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում կարծիք:

10. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում, ամփոփելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և տվյալ ծրագիրն ընդգրկող տնտեսության ոլորտը համակարգող լիազոր պետական մարմնի կարծիքները, մշակում է Հայաստանի Հանրապետության

կառավարության համապատասխան որոշման նախագիծ և այն ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը դրա մասին տեղեկացնում է դիմողին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ